մտեալ ի ներս տեսաք լայնանկատ բակն պարս-
80 պով, բաղում խցերով եւ օթեւանօք: Կայր
վարդապետ մի ընտիր եւ աստուածահաճոյ՝
Պօղոս անուն, չորս եպիսկոպոս, ԺԵ հարե-
ղայ, տնտեսք, սարկաւագք: Եւ մշակքն ա-
մէն քուրդ էին եւ հայերէն ջրի պէս կու խօ-
85 սէին. եւ ոչ թէ վանքն միայն, այլ եւ ամե-
նայն Մշու օվան եւ գաւառն հայնակ զրուցեն
Քուրդերն եւ սուրբ Կարապետի անունն կ'երդ-
նուն:

Փոքր բան տարաք, ժամ առնելով տվաք
90 եւ աղաչեցաք որ մուծին զմեզ ուր տապանն է:
Եւ եկեղեցոյ մէջն սիւնքն գեղեցիկ մարմէրէ.
եւ կայ աջ կողմն մատուռ մի եւ գերեզման
սուրբ Կարապետին. եւ միւսն Աթանագինէ
եպիսկոպոսի. զոր երկրպագեալ աղօթեցաք,
95 մեղայ թողութիւն խնդրեցաք մեզ եւ մեր
ծնողաց եւ մեր երախտաւորաց: Մեք հասաք
մեր մուրատին. Աստուած զամէնքն հասցնէ
իւրեանց մուրատին: Եւ տվին մեզ ճուհար
հողուն, որ ի սուրբ գերեզմանէն կ'ելնէ:

100 Եւ վարդապետն կոչեաց զմեզ ի ճաշ. զի
էր երկիւղած եւ աստուածասէր, քաղցր եւ
համեղախօս. կերաք կերակուր վանաց եւ
արբաք ջուր: Սկսաւ խօսել վարդապետն եւ
ասել. «Ի՞նչ առնեմ, որդեակ, նոր եմ չինել
105 եւ նորոգել վանքս. զի յոյժ աւեր եւ ամայի
էր. զի ամէն տարի խզբլպաշն կ'այրէ, կ'ա-

84 քուրթ: — 87 քուրթերն: — 89 պանտարաք:
— 104 որդեակք: — 105 յամայի: